[1] Դուրս գրման ամսաթիվ		
28	Մարտ	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
28	Մարտ	2019 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	1226057848

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ		

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի		
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7	
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի		
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3	
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[18] Լրացուցիչ տվյալներ		
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	
[20] Մատակարարման (առաքման) եղանակը		
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 61200619 բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ KALANTARYAN GAYANE
7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

28/03/2019 14:09:34

ՈՐՈՇՈՒՄ
Ամբողջատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

14 փետրվարի, 2019թ. ք. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, երրորդ դասի խորհրդական Դ.Մանուչարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 61200619 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. հոկտեմբերի 25-ին Վանաձոր քաղաքի Բաղրամյան 2-րդ փողոցի 44 տան բնակիչ Աշոտ Ալիխանյանը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում հաղորդում է տվել, որ նույն թվականի հոկտեմբերի 25-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավանի տնակներից մեկում իր ծանոթ «Վարդանլվեցի Վալոդիկը» բացահայտ հափշտակել է իրեն պատկանող 30. 000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսը:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում նյութերի նախապատրաստման ընթացքում՝ Աշոտ Ալիխանյանը բացատրություն է տվել, որ իր բջջային հեռախոսը չեն հափշտակել, այլ շուրջ երկու ամիս առաջ այն վաճառել է 5000 ՀՀ դրամով: Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավանի տնակում Վլադիմիր Գասոյանը միայն երկու անգամ ապտակել է իրեն և պատճառել ֆիզիկական ցավ, իսկ ոստիկանության բաժնում հաղորդում ներկայացնելու ժամանակ գտնվել է ոչ սթափ վիճակում, որի պատճառով էլ կեղծ տեղեկություններ է հայտնել:

Հետագայում Աշոտ Ալիխանյանը լրացուցիչ բացատրությամբ հերքել է Վլադիմիր Գասոյանի կողմից իրեն հարվածելու հանգամանքը, իսկ ոստիկանության բաժնում իր կողմից սուտ հաղորդում տալը պատճառաբանել է իր կողմից վաճառված բջջային հեռախոսը ոստիկանության ծառայողների գործողությունների միջոցով հետ ստանալու ցանկությամբ:

2018 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի ավագ հետաքննիչ Ս. Դանիելյանը, հաստատված համարելով, որ Աշոտ Ալիխանյանի բջջային հեռախոսը չի հափշտակվել և վերջինիս Վլադիմիր Գասոյանը չի հարվածել, որոշում է կայացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

Նույն օրը ավագ հետաքննիչ Ս. Դանիելյանը նաև զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի պետին՝ իր լիազորություններն իրականացնելիս հանցագործության՝ Աշոտ Ալիխանյանի կողմից սուտ մատնություն կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ հայտնաբերելու վերաբերյալ:

Նշված դեպքի առթիվ ևս ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչությունում նախապատրաստվել են նյութեր:

2018թ. նոյեմբերի 6-ին Վլադիմիր Գասոյանի կողմից Աշոտ Ալիխանյանի բջջային հեռախոսը բացահայտ հափշտակելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերի օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնող դատախազի կողմից որոշում է կայացվել այդ դեպքի առթիվ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով թիվ 71200818 քրեական գործը հարուցելու մասին, որը

նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն:

2018թ. նոյեմբերի 12-ին ավագ հետաքննիչ Ս.Դանիելյանն Աշոտ Ալիխանյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով:

Որոշումը պատճառաբանվել է նրանով, որ թիվ 71200818 քրեական գործով դեռևս առկա չէ վերջնական որոշում, որի կայացումից հետո նոր միայն հնարավոր կլինի պարզել Աշոտ Ալիխանյանի կողմից սուտ մատնություն կատարելու հանգամանքը:

Աշոտ Ալիխանյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերը, քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2018թ. նոյեմբերի 12-ի որոշումը վերացնելու նպատակահարմարության հարցը քննարկելու վերաբերյալ Լոռու մարզի դատախազի միջնորդությամբ, 2019թ. հունվարի 9-ին ստացվել են ՀՀ գլխավոր դատախազությունում:

Ստուգելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2018թ. նոյեմբերի 12-ի որոշման օրինականությունը և ուսումնասիրելով նախապատրաստած նյութերը՝ ՀՀ գլխավոր դատախազը գտել է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին ավագ հետաքննիչ Ս. Դանիելյանի 2018թ. նոյեմբերի 12-ի որոշումը ենթակա է վերացման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Թիվ 71200818 քրեական գործով կատարված նախաքննության արդյունքում 2018 թ. Դեկտեմբերի 28-ին որոշում է կայացվել Վլադիմիր Գասոյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և թիվ 71200818 քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով: Ընդ որում, նշված քրեական գործով նախաքննությամբ հերքվել են Աշոտ Ալիխանյանի հաղորդմամբ նշված տեղեկությունները և ձեռք են բերվել այնպիսի տվյալներ, որոնք առերևույթ վկայում են ՀՀ քրեական որենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սուտ մատնություն հանցագործության դեպքի մասին, սակայն հաշվի առնելով Աշոտ Ալիխանյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով դեռևս 2018թ. նոյեմբերի 12-ին կայացված քրեական գործ հարուցելու մասին չվերացված որոշման առկայությունը, նախաքննական մարմինը ձեռնպահ է մնացել քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուց:

Նշված հանգամանքը հաստատում է ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը և իր հերթին պայմանավորում է ավագ հետաքննիչ Ս.Դանիելյանի 2018թ. նոյեմբերի 12-ի որոշումը վերացնելու անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 25.01.2019 թվականի որոշում է կայացվել Աշոտ Ալիխանյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2018թ. նոյեմբերի 12-ի որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

2019 թվականի փետրվարի 07-ին թիվ 61200619 քրեական գործը ստացվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչությունում և ընդունվել վարույթ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Աշոտ Ալիխանյանը դիսպանսերում և նարկոլոգիական կաբինետում հաշվառված չէ, սակայն առկա քաղվածք՝ ստացված 2012 թվականին «Նորք» հոգեբուժական կենտրոնից, որի համաձայն Աշոտ Ալիխանյանը տառապում է «թեթև աստիճանի մտավոր հետամնացություն» հիվանդությամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզաբանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի

ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ «Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2.Փորձաքննության ներկայացնել սույն որոշումը, Աշոտ Ալիխանյանը և քրեական գործի նյութերը կներկայացվեն փորձաքննության կատարման օրը:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

ա. Աշոտ Ալիխանյանը հիշյալ արարքը կատարելուց առաջ, կատարման պահին և դրանից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ և երբվանից, այդ հիվանդությունը կրել է քրոնիկ բնույթ, թե ոչ:

բ. Եթե Աշոտ Ալիխանյանը տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, արդյոք այն զրկել է նրան իր կատարած արարքի վտանգավորությունը գիտակցելու կամ այն ղեկավարելու հանգամանքից, վերջինս մեղսունակ է, թե ոչ, նա հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հաստատությունում, և արդյոք բուժումը հակացուցված չէ:

գ. Հիշյալ արարքը կատարելու պահին Աշոտ Ալիխանյանն արդյոք չի գտնվել հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման վիճակում և նա կարող էր այդ վիճակում գիտակցել իր գործողության վտանգավորությունը և ղեկավարել դա, թե ոչ:

Փորձագետին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4.Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝ **Դ.Հ.Մանուչարյան**